

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ԱՄԵՆ. ՍՐԱՍԶԱՆ ՏԵՂԱ-
ԿԱԼԻ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԱՄ. ՀԱՅՈՑ ԿԱԹՈ-
ԴՐԵԱՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՍԱԼ

Ամենայն Հայոց Հայրապետական Ամեն.
Տեղակալը Սեպտեմբեր 1 բուսականով հետեւ-
եալ հեռագիրը ուղղած է Ս. Արսույոյ Ամեն.
Ս. Պատրիարք Հօր:

«Նկատի ունենալով ներկայիս տիրող
պատերազմական վիճակը, էջմիածնի Գերա-
զոյն Հոգեւոր Խորհուրդը Հայոց Կաթողիկո-
սին ընտրութիւնը յետաձգեց 1942 թուակա-
նին: Հաճեցէք զայս յայտարարել ՍԻՈՆ-ի
միջոցաւ եւ հաղորդել Պուլկարիոյ, Յունաս-
տանի, Ռումանիոյ եւ Եւրոպայի Թնմբուն»:

(Ստորագրութիւն)

ՏԵՂԱԿԱԼ ԳԷՈՐԳ

ԾԱՆՈԹ. ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ. — Նկատելով
որ արդիւն 1942 տարւոյն մէջ կը զտնոյնի, հա-
շանակաւ եւ որ 1943 ըսել կ'ուզուի:

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 30 Օգոստոս կիր. — Վերախաղաւ Ս. Աստու-
ածածնի. Կանխող երկու շաբաթներու ընթաց-
քին, ամէն օր, Միաբանութիւն եւ աշակերտու-
թիւն, Գեթեմանիի ձորը իջան, մասնակցելու
Աստուածամօր գերեզմանին վրայ մատուցուող
ամենօրեայ Ս. Պատարագներուն: Միշտ ալ ներ-
կայ եղան բազմութիւն մը ջերմեռանդ հաւա-
տացեալներու:

Երէկ երեկոյն, ամբողջ Միաբանութիւնը եւ
աշակերտութիւնը (օգափոխութեամբ Պարոն-Տէր
գացած ժառանգաւորներուն մէկ մասը իրենց
Փոխ-Տեսուչ Հոգ. Տ. Թորգոմ Արեղայի հետ
առաւօտուն վերադարձած էր վանք) Գեթեմանիի
ձորը իջաւ, ուր հանդիսաւոր մուտքով «Հրաշա-
փառ»ը կատարուեցաւ զխաւորութեամբ Գեր.
Տ. Արտաւազդ Արքեպս.ի, եւ մատուցուեցան
Կիրակնոց, Հսկումի, յաջորդ օրուան գիշերա-
յին ժամերգութեան պաշտամունքները. տօթին
հակառակ սրբալայրը կենդանի էր հաւատաց-
եալներու ներկայութեամբ: Գիշերուան ժամը
8.30ին, Միաբանութիւն եւ աշակերտութիւն
վանք վերադարձան:

Այսօր առաւօտ, նոյն հանդիսաւորութեամբ
ամբողջ Միաբանութիւնը իջաւ Ս. Աստուածածին
եկեղեցին, ուր, Աստուածամօր գերեզմանին վը-
րայ, «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն յետոյ,
հանդիսապետ Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս.ը մա-
տոյց սուրբ եւ անմահ պատարագը, եւ քարոզեց
քնարան առնելով «Օրհնեալ ես դու ի կանայս»
խօսքը Աւետարանին, Հաւաստեց թէ աշխարհ
խօսքը Աւետարանին, Հաւաստեց թէ աշխարհ
ինչ որ ունի իբրեւ սէր, գթութիւն, երջանկու-

թիւն, անմեղ կոյսի մը եւ օրհնուած մօր մը շնոր-
հիւ է որ ունի: Տրտուութեամբ ծնելու առաջին
անէծքը անո՞վ սրբուեցաւ մարդկութեան հակա-
տէն, ու ծնունդը՝ ժպիտ, տառապանքը՝ երջան-
կութիւն դարձաւ մարդկային կեանքին մէջ: Ս.
Կոյսը, այսպէսով, բրիտանական արտաքին
աշխարհակալութեան ներքին զոպանակը հանդի-
սացաւ:

✱ 31 Օգոստոս Բչ. — Մեռելոց. Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Գեր. Տ.
Արտաւազդ Արքեպս. «Երանի օգաւորաց» քնա-
րանով. ցոյց տուաւ թէ ինչպէս բրիտանական
քարոզութեան յետոյ միայն, մահը, որ բնական
իրողութիւն մը ըլլալով հանգեցած սարսափն էր
աշխարհի որդիներուն, դարձաւ նոյն բնական
երևոյթ, որուն մէջ այս անգամ աւելի կը գեղեց-
կանան կարծես հողինքը Աստուծոյ որդիներուն:

Ս. Պատարագէն յետոյ մասնաւոր Հոգեհա-
զրտեան արարողութիւն կատարուեցաւ հաւ-
գուցեալ Գեր. Տ. Մկրտիչ Արքեպս. Աղաւունքի
հոգւոյն, անոր մահուան տարեիլիցին առիթով, եւ
այսպէս Աղգ. Գերեզմանատան մէջ նմանապէս հաւ-
դիսաւոր Հոգեհաւգտեան պաշտամունքը տեղի
ունեցաւ ի հանդիստ հոգւոյ համայն ննջեցեալոց
կեդրիս Հայոց:

✱ 13 Սեպտ. կիր. — Գիւս Գոսոյ Ս. Աստու-
ածածնի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Աստուա-
ծամօր Ս. Գերեզմանին վրայ, յետ հանդիսաւոր
«Հրաշափառ»ով մուտքի: Պատարագեց հիւրա-
բար Ս. Աթոռ եկած Անթիքիայի հոգեւոր հայ-
րերէն Տ. Ղևոնդ Վրդ., որ եւ քարոզեց ըստ պատ-
շաճի աւուր, մարդարէական այն գաղափարին
վրայ ուր Ս. Կոյսը կը նկատուի գերազանցողը Աս-
տուծոյ զօրութիւնը ստացողներուն: Մատնանչեց
թէ այդ գերազանցութիւնը մարմնական գեղեց-
կութիւնը եւ ֆիզիքական առաւելութիւնները
չեն, այլ Տիրամօր կողմէ մայրութեան դերին. եւ
այդ մայրութեան պարտականութիւնը կ'ենթադրէ
զաւակներու դաստիարակութիւն եւ տունի հսկո-
ղութիւն, կառավարութիւն:

✱ 20 Սեպտ. կիր. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Յուսիկ
Վրդ. «Վշտակից լի իբրեւ զբարւոյ զինուոր Գրի-
տոսի...» քնարանով. ցոյց տուաւ թէ բրիտան-
եային կեանքը նման է զինուորի կեանքին: Զին-
ւորին պէս պիտի ունենայ հնազանդութիւն աստ-
ուածային կամքին, հրամանին. ճկունութիւն՝
կեանքի ռազմապաշտէն յաղթական զօրք գալու
համար. ու զինուորին նման պարտքին տակն է
Ըլլալու անձնազօր, զօրծունեայ:

✱ 21 Սեպտ. Բչ. — Ծնունդ Ս. Աստուածածնի.
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածա-
ծին, յետ հանդիսաւոր «Հրաշափառ»ով մուտքի:
Քարոզեց Տ. Հմայեակ Վրդ., ցոյց տալով Տիրա-
մօր դերը մարդկային փրկագործութեան, ընտա-
նեկան եւ ընկերային կեանքներուն մէջ, Աստուծոյ
Բանին մայրը ըլլալու արժանիքը իր անձին վրայ
ի յայտ բերած ըլլալով, Ս. Կոյսով կ'ենը սրբա-
գրեց դարերու իր դատակնիքը. եւ որպէսզի
ներկայ դարու մայրութիւնը կարենայ քաղաքա-
կրթութեան մէջ իր դերը ունենալ, մաղթեց որ

Ս. Կոյսը չզգալի տիպար մնալէ բոլոր մայրերուն:

※ 27 Սեպտ. Կիր. — Տօն Վերացման Սրբոյ Խաչին, երէկ երեկոյ, Կիրակոսից ժամերգութենէն յետոյ հանդիսաւորապէս կատարուեցաւ նախատօնակը Վերացման Խաչի, ու Մայր Տաճարին մէջ թափօր կազմած, Խաչափայտի մասունքը պարունակող ճաճանչաւոր խաչը «Նշանաւ»-ով փոխադրուեցաւ Ս. Գլխազրի մատուռէն զեպի Աւագ Խորանի սեղանը, Գիշերը, լուցուած բոլոր կանթեղներու լոյսերուն մէջ խորհրդաւոր միջնորդութիւնով մը աւելի սրտառուչ պահ մը ապրիլ տօնող Ս. Գաղթայ Տաճարին մէջ տեղի ունեցաւ Հսկումի արարողութիւնը:

Իսկ այսօր, ի Ս. Գաղթայ հանդիսաւորապէս Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Եպիսկոպոսի թեմին Առաջնորդական փոխանորդ Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեան:

※ 28 Սեպտ. Բշ. Մեռելոց. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Տ. Հմայեակ Վրդ. «Մահուամբ զմահ կոխեաց, և յարուսեալսն իւրով մեզ զկեանս պարգեւեաց» բնաբանով: Ներկայացուց մահուան և կեանքի երկու տարբեր երևոյթները իրեւ խորապէս մէկ իրողութիւն: Քանի որ մահը սպառում, բնաջնջում չէ այլ կերպով մը հաւաստումը կեանքին: Մահով, մահէն յետոյ հոգիի կեանքն է որ կը սկսի: Եւ այս երևոյթը խորունկ յայտնութիւնն է Խաչի խորհուրդին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ամեն. Ս. Պատարագը Հօր հիւանդութեան առթիւ հետեւեալ անձնաւորութիւնք այցելած են Պատրիարքարանս և տեսակցելով Սրբազան Հիւանդին հետ չուտափոյթ ապաքինում և կատարեալ առողջութիւն մաղթած են Նորին Ամենապատուութեան:

※ 2 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Դպտոց Ս. Եպիսկոպոսին փոխանորդը:

※ 7 Սեպտ. Բշ. — Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վսեմ. Մր. Գիթ-Բօշ:

※ 15 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Յունաց Պատրիարք Ամեն. Տ. Տիմոթէոս Արքեպս.:

※ 19 Սեպտ. Շր. — Երուսաղէմի Ասորոց Գեր. Տ. Ֆիլոքսենոս Եպիսկոպոսը, որ այս առթիւ Նորին Ամենապատուութեան յանձնեց Անտիօքի Ասորոց Ամեն. Ս. Պատրիարքին կողմէ ուղղուած սիրալիր գրութիւն մը:

※ 21 Սեպտ. Բշ. — Ֆրանչիսկեանց Գեր. Կիւսոսոր:

※ 30 Սեպտ. Դշ. — Անդր-Յորդանանի Յոյն Կաթողիկոս Ս. Արքեպիսկոպոսը, ընկերակցութեամբ տեղւոյս Յոյն Կաթողիկոս փոխանորդին:

※ 1 Սեպտ. Դշ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ առժամայ ղեւանապետ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. և աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապան Արեղայ, ներկայ գտնուեցան տեղւոյս Անկիլքան Սէն Ժօրժ Եկեղեցիին մէջ, Ն. Ա. Բ. Քենթի Դուքսին մահուան առթիւ կատարուած Հոգեհանգստեան արարողութեան:

※ 3 Սեպտ. Եշ. — Այսօր, երեկոյան ժամը 7ին Ս. Գաղթեանց Մայր Տաճարին մէջ Հսկում կատարուեցաւ, պատերազմի երրորդ տարեկիցին առթիւ:

※ 9 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Պէճիքական Նոր Ընդհ. Հիւպատոս Ն. Վ. G. Delecoigne իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանս, և ընդունուեցաւ Պատրիարքական Փոխ. Գեր. Տ. Գէորգ Վարդապետի կողմէ:

※ 11 Հոկտ. Կիր. — Ի դիմաց Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր՝ Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. և Աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապան Արեղայ, Բամազան Պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուին քաղաքիս Խալամկան Բարձր Ժողովին, և աւագանիէն քաղաքապետ Մսթաֆա Պէյ Էլ-Խալտիին, Օգնական Չիլի-Սէքրէթարի Բուշի Պէյ Ապտէլհատին, Խամայի Պէյ Հիւսէյինին և Բաղդադ Պէյ Նէշաշիպիին:

ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ ՄԵՐ ՄԷՋ

25 Սեպտեմբեր Ուրբաթ օրը, Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր մասնաւոր հրաւերով Ս. Աթոռ ժամանեց Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեանը, մատուցանելու համար Վերացման Խաչի Պատարագը, և նախագահելու օրուան հանդիսութեանց: Նորին Սրբազնութիւնը Լիւտի կայարանէն դիմաւորուեցաւ Տնօրէն Ժողովի անդամ Հոգ. Տ. Հայրիկ Վրդի և Աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապան Արեղայի կողմէ: — Ս. Հայրը բարձրօրէն կատարեց իր այդ պարտականութիւնը և Խաչիկերացի Կիրակին պատարագեց ու քարոզեց բնաբան առնելով Առաքելային խօսքը. «Հրեայք Նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, իսկ մեք քարոզեսցուք զխաչելեան Քրիստոս հրէից զայն կողմից և հեթանոսաց յիմարութիւն»: Յոյց տուաւ թէ պատմութեան մէջ պակաս չեն եղած թերահաւատներ, հրէամիտք իստոնեաներ, որոնք մինչև այսօր յոյն հրաշքները կը սպասեն երկինքէն, հաւատալու համար Աստուծոյ Որդւոյն Աւետարանին: Հայ ժողովուրդը սակայն միշտ ալ հաւատացող մնացեր է Խաչին սփռութեան: Անոր պատմական կեանքը և իր գոյութիւնն իսկ ապացոյցն են այս իրողութեան:

Յետ Ս. Պատարագի, մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքներուն և ինչպէս տարիներու սոյնօրութիւնն է՝ Մեկոնեան երկու հարազատ եղբայրներու հոգիներուն ի հանդիստ:

Նոյն երեկոյին, Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեանի նախագահութեամբ, կատարուեցաւ Խաչիկերացի անդատանը, — Շաբաթ մը մեզի հետ ըլլալէն վերջ Սրբազան հիւրը մեկնեցաւ Սիւրիա, Գիւտ Խաչին ևս գալու և հանդիսութեանց նախագահելու խոստումով: — Մեր խորին շնորհակալութիւններն իր ըրածին, և քաղցր ըստաւումը իր վերադարձին համար:

ԼԷՍԱՊԹԸ՝ ՊԱԼԱՏ

2 Սեպտեմբեր, 1942

Սիրելի եւ Ամենապատիւ Տէր,

Հրահանգ ստացած եմ Նոցին Վեհափառութեանց կողմէ հաղորդելու Ձերդ Ամենապատեմութեան այն խորապէս անկեղծ երախտագիտութիւնը որով Նոցին Վեհափառութիւնք ստացած են Ձեր ցաւակցութեան ազնիւ հետազոյրը:

Կը փութամ աւելցնել իմ անձնական խնդակցութիւններս Ձեր այսպիսի հետազոյր մը առաւման համար: Սոյն կերպով աւելի կը գործնան համակրութեան կապերը, որոնք ժամանակի ընթացքին յառաջ պիտի բերեն բարի կամեցողութեան աւելի մեծ ծաւալ մը ամբողջ աշխարհի մէջ:

Ձերդ հաւատարմօրէն,
Ռոնալդ Ք. Մ. Ք. Մ. Ք. Մ.

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆ. ՄԵՍՐՈՊ Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ

28 Օգոստոս, Ուրբաթ երեկոյին, ժամը 8ին, կառավարական հիւանդակաւքով Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցէն Ս. Աթոռ վերադարձաւ Ամեն. Ս. Պատրիարք Զայրը: Նորին Ամենապատեմութեան կ'ընկերանային Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս. Սիւրմէլեան, բժշկապետ Տօթք. Յովսէփ Ա. Եէնի-Դամէան, Անթիլիասի Աթոռին կողմէ Զոգ. Տ. Ղեւոնդ Վրդ. Զէպէեան եւ մեր Միաբաններէն Անթիլիասի Ժառանգաւորաց Տեսուչ Զոգ. Տ. Շնորհք Վրդ. Գալուստեան:

Աւելի քան խոր ու անկեղծ է մեր շնորհակալութիւնները նախ Ամերիկեան Հիւանդանոցի անձնուէր ու պատուական բժիշկներուն եւ բոլոր սպասարկողներուն, որոնք մէկուկէս ամիս շարունակ գոբերգութեան քով եւ հոգածութեամբ չըրջապատեցին Սրբազան Հիւանդը, եւ բարեկաւուած մեզի վերադարձուցին զայն: Սակայն կը մասնաւորենք մեր խոր եւ անկեղծ երախտագիտութիւնը բժշկապետ Տօթք. Եէնի-Դամէանին՝ առաջին օրէն Սրբազան Հիւանդին նկատմամբ ունեցած իր ազնիւ ու բարձր զգացումներուն համար: Հակառակ իր զբաղումներուն յարգելի Տօթքօրը ուղեկիցը եղաւ Սրբազան Զօր վերադարձին իր ազնւաւորալ Տիկնոջը հետ միասին: Ընդ շարքի մը հսկեց Հիւանդին անհրաժեշտ պէտքերուն, եւ իր իմաստուն թեւադրանքները ընելէ վերջ Սրբազանը խնամող բժիշկներուն՝ մեկնեցաւ:

Խոր շնորհակալութիւն եւ յարգանք նոյնպէս Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս. Սիւրմէլեանին, իր եղբայրացական ազնիւ զգացումին եւ վերաբերմունքին համար հանդէպ Սրբազան Պատրիարք Զօր եւ Ս. Աթոռոյ Միաբանութեան: Դժբախտաբար Գեր. Տ. Արտաւազդ Սրբազանին զբաղումները թոյլատու չեղան որ աւելի երկար ունենայինք զինքը մեր մէջ: Վերափոխման Պատարագէն երկու օր յետոյ, Պէյրութ վերադարձաւ՝ ի զուրկ իր բազմաթիւ ու բազմակերպ զբաղումներուն որոնց նուիրուած է եւ զորս այնքան ձեռնահասօրէն կը զեկաւարէ. մեր խոր շնորհակա-

լութիւնները իրեն: Շնորհակալութեան լայն բաժին մը նաեւ կ'իլիկիոյ Անթիլիասի Աթոռին Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպսկ. Կարօեանին եւ Միաբանութեան, Ս. Հիւանդին նկատմամբ իրենց ունեցած սիրոյն եւ յարգանքին համար. Զոգ. Տ. Ղեւոնդ Վրդ. Զէպէեանին Ս. Պատրիարք Զօր ուղեկցիլը զոյգն մէկ արտայայտութիւնն էր այն սիրոյն եւ յարգանքին զոր Անթիլիասի Միաբանութիւնը միշտ ունեցած է Սրբազան Պատրիարքին եւ Միաբանութեան նկատմամբ:

Երբ կը վերջացնենք հոս շարքը մեր շնորհակալութեանց խոր անոնց որոնք իրենց ազգային եւ մարդկային պարտականութեանը մէջ եղան՝ այս Հաստատութեան եւ անոր Պետին նկատմամբ, չենք կրնար չյայտնել մեր բոլորին խոր երախտագիտութիւնը Աստուծոյ որուն շնորհիւ ուրախ ենք յայտնելու որ Նորին Ամենապատեմութիւնը իր հարուածէն բուժուելու ապահով վիճակի մէջ է. բոլորովին յստակ է իր խօսքը, կը շարժին իր կաթնածանհար ձեռքն ու ոտքը, մօտ օրէն եթէ Տէրը կամենայ պիտի կրնայ այլեւս առանց ուրիշներու օժանդակութեան շրջիլ:

Ո Ի Ե Ր Ա Ր Ա Կ Ի Ե Ն Ե Ր

Ժառ. Վարժարանի այս տարուան չըջանաւարտներէն չորսը Լեւոն Աթուհեան, Յակոբ Սարգիսեան, Օննիկ Թաղէսեան, եւ Հայկ Մելգոնեան՝ ըրին իրենց կուսակրօնութեան եւ Ս. Աթոռոյ ծառայութեան ուխտը, եւ Ս. Պատրիարք Զօր մէջ ընդունեցին ուրար կրեւել շնորհը Հոկտեմբեր 5ին: Միաբանութեան շարքին այս չորս խոստմնալից ուժերու առիթով մեր զգացուած ուրախութիւնը անխառն է: Եթէ Տէրը կամենայ մօտ ժամանակէն Սրբազան Պատրիարք Զօր ձեռքէն պիտի ընդունին անոնք Յիսուսի քաղցր լուծը՝ Սարկաւազութեան աստիճանը եւ, այժմ միայն ուրարի ժապաւէնով խորհրդակրուած:

Տիրացու Լեւոն Աթուհեան, ծնած է ի Նիկոսիա 1922ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Մեկիքեան վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է փայլուն յաջողութեամբ:

Տիրացու Օննիկ Թաղէսեան, ծնած է Գահիբէ 1921ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Գալուստեան Ազգ. Վարժարանին մէջ: 1938ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ:

Տիրացու Հայկ Մելգոնեան, ծնած է ի Դերբէ խան 1923ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգ. Վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ:

Տիրացու Յակոբ Սարգիսեան, ծնած է Պէյրութ 1923ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Նոր Մարաշ Թաղի վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ: